ԱՐՇԱԼՈՒՅՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 133

7 ՓԵՏՐՈՒԱՐ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՏՕԼԱՑՈՒՑ

Փետրուար	8 †	*Կիր.*	*բ.*
	9	*Բշ.*	*բկ.* Սրբոց Ասուվմանց զօրավարաց:
	10	*Գշ.*	*գ.* Սրբոց Սուրիասանց ճօճից:
	11	*Դշ.*	*գկ.* Պահոց:
	12	*Եշ.*	*դ.* Սրբոց Ոսկեանց:
	13	*Ուր.*	*դկ.* Պահոց:
	14	*Շբ.*	*ա.* Սրբոյն Սահակայ Պարթեւի Հայոց Հայրապետի:

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹ-ԱԹՈՌԵՐԹ

Զորրորդ տարի ✠ 7 Փետրուար 1914 ✠ Թիւ 133

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ **Կաթողիկէ Արձագանգ** շաբաթաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւանանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն ուրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի տէր Վալի, առ Ամեն. Տ. Պողոս Պետրոս ԺԳ. Թերզեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 թուահամարաւ:

ԴԷՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՌՈՒՍԻՈՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՔ

Տանն Կիլիկիոյ Հայ Կաթողիկէ Կ. Պատրիարքին իրաւասութիւնը, ինչպէս ծանօթ է ամէնուս, յիրաւանց կը տարածուի միայն Օսմանեան պետութեան և Պարսկաստանի սահմանաց մէջ գտնուող Հայ Կաթողիկեայց վրայ։ Արտասահմանի մէջ սակայն կը գտնուին բազմաթիւ Հայ Կաթողիկէներ, որոնք գտնուելով հանդերձ ուղղակի իրենց առաջնորդացը հպատակութեան տակ, անընդմիջաբար կախում ունին Հռոմայ Ս. Աթոռէն։ Ի Հունգարիա, ի Լեհաստան, Իտալիոյ մէջ, ի Լիվոռնոյ՝ կան խումբ խումբ Հայ կաթողիկեայք. ի Լէյպոլիս (Լէմպէրկ) աթոռ ունի հանրածանօթ արքեպիսկոպոս Թէոտորովիչ, գիտութեամբ և վարուց սրբութեամբ երեւելի, կայսերական խորհրդական և Վիէննայի ծերակուտին անդամ։ Այս համայնքներուն վրայ այլեւայլ անգամներ գրուած է ըլլա՛յ թերթերու միջոցաւ, ըլլայ առանձինն հատորներով։

Մենք հոս կը փափաքինք երկու խօսք ըսել Ռուսիոյ կայսրութեան մէջ գտնուող մեր Հայ կաթողիկէ եղբարց վրայ, վաւերական աղբիւրէ մը քաղելով մեր ծանօթութիւնները։

Թերթիս խմբագրութիւնը չնորհակալութեամբ ընդունեցաւ իրեն ղրկուած Օրացոյց մը 1914ի, որ այն համայնքին Առաք. Կառավարչին հրամանաւ տպագրուած էր ի Թիֆլիս, ի գործածութիւն հաւատացելոց։ Հնաւաքրքրական հատորիկ մըն է, վարը քառածալ, ազնիւ թուղթով, շատ մաքուր

տպագրութեամբ, ճոխ մանրամասնութիւններով, երեք մասի բաժնուած։

Առաջին մասը կը կազմէ տօնացոյցի կարգաւորութիւնը, ըստ կաթողիկէ հայ ծիսի։ Դիտողութիւնները կատարելագոյն ձեւ մը ունին այս տեսակին մէջ, նաև տեղական պայմանաց ընթացքը կարեւորութիւն ստանալով. օր. հ. անոր մէջ կը նշանակուին պակի թոյլատրուած, պահոց և ծոմապահութեանց օրեր, ևն. և այս՝ իր օգտակարութիւնն ունի, մեկ վիճակի հանգամանքն ի նկատի ունենալով։ Նոյնպէս տեղ տեղ, երբ պատչաճութիւնը բերէ, մասնաւոր ծանօթութիւններով ժողովրդապետներուն կը յիշեցնէ իրենց պարտքը ժողովրդեան զեկուցանելու ծոմի, պահքի, այլեւայլ ուներու, ևն. օրերը. նոյնպէս ուրիշ պատչաճ կամ կարեւոր պարագաները և զուգադիպութիւնները։ Օրացոյցը կը գործածէ միայն երկու թուական, Յուլեանն ու Գրիգորեանը, այսինքն՝ հին և նոր տոմար ըսուածը։

*
* *

Կարեւորագոյնը՝ Երկրորդ մասն է։ Ռուսիոյ Հայ Կաթողիկէ համայնքին պատկերացուցիչ մէկ պաշտօնական ցուցակն է։ Ճակատը կը կրէ, չքազարերով պճնուած, Ս. Պապին՝ Պիոսի Ժ ի Քահանայապետին, «Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ Փոխանորդին և գլխոյն Առաքելոցն Ս. Պետրոսի 259դ. Յաջորդին», հակիրճ մէկ կենսագրութիւնը, որ կ'աւարտի մաղթանօքս. «Կեսցէ՛ ընդ երկայն աւուրս»։

Անմիջապէս կը յաջորդէ՝ «Կաթողիկէ Նուիրապետութիւն ի Ռուսաց Կայսրութեան»։ Ասկէ կը տեսնուի թէ բուն Ռուսիոյ մէջ կան վեց Աթոռներ. 1. Մոսկիւեի Արք. Մետրապոլտութիւնը (ի վերայ ամենայն կաթողիկեայ եկեղեցեաց ի Ռուսաց կայսրութեան), Արքն է Վ. Կլիւչինսկիյ. ունի երեք օգնական Եպ.ներ։ 2. Վիլնոյ, Առաքակառավարիչ, Կ. Միխալկէվիչ, երեք օգնական Եպ.ներով։ 3. Տէլիչի կամ Սամոգիտի Եպ.. երեք օգնական Եպ.ներով։ 4. Լուցկ—և— Ժիտոմիրի Եպ., երեք օգնական Եպ.ներով։ 5. Տիրասպոլսու Եպ., Յովսէփ Ալոյիզ. Կէսլէր, երկու օգնական Եպ.ներով։ 6. Առաքելական կառավարչութիւն Հայ Կաթողիկեայց։

Իսկ «ի թագաւորութեան Լեհայ» կան եօթն Աթոռներ, որոց առաջինը Արք.կան, երկու օգնական Եպ.ներով, իսկ միւս վեցը՝ Եպ.կան, մէյմէկ օգնական Եպ.ներով։

Կայ «Հռովմէական-Կաթող. հոգեւոր Կոլլեգիա ի Ս. Պետերպուրգ», եկեղեցական վեհագոյն ժողով, որոյ նախագահն է Մոգիլեւի Արք. Մետրապոլիտը, երկու եկեղեցական անդամներով։ Զորս թեմական կանոնիկոսաց ժողովոյն ներկայացուցիչներ կան և Դատախազ և Քարտուղար։

Այնուհետեւ կը սկսի՝ «Հոգեւոր Վարչութիւն Կաթողիկեայ Հայոց ի Կայսրութեանն Ռուսաց»։

«Առաքելական Կառավարիչ» է՝ «Նորին Գերապայծառ Տէրութիւն Սարգիս Վ. Տէր Աբրահամեան (ծն. 1868, կարգեալ Առ. Կառ. յ12 Սեպտ. ի 1909)։ Սա՝ իր նախագահութեան տակ ունի «Ատեան Հոգեւոր Վարչութեան», այս Ատեանին երկու անդամներն են Հ. Դիոն. Գաղատոսեան և Տ. Աղ. Շահանեան. Քարտուղարն է՝ Մկրտիչ Մ. Կարա-Մուրզա։

Կան եօթը «Աւագ Քահանայք որ և պատգամաւորք են ի պետական պաշտօնատեղիս, և քննիչք»։

Հիմա ամփոփենք այս ընդարձակ թեմին բաժանումները, իրենց մարդահամարով։

1. Տփղիս (Թիֆլիզ) Աթոռանիստ քաղաք և շրջակայք. չորս ժողովրդապետութիւն, երկուքը ի Տփղիս, միւսներն՝ Սկրա և Սանավարդոյ գիւղերուն մէջ։ Ժողովրդեան ամբողջականութիւնն է՝ 2187։

2. Կը հետեւին եօթն «Աւագութիւնք» (Doyennés)։ Ա. Աւագութիւն Արդուբնոյ (Բաթումայ Նահանգ). Աւագ քհ. Տ. Կարապետ Դիրլուկեան։ Ժողովրդապետութիւնք. 1. 2. և 3՝ յԱրդուբին, 4. Կորձուլ, 5. Արտանուճ, 6. Տանձոտ, 7. Սաթլէլ, 8. Փըխիկուր, 9. Մամանելիս, 10. Բաթում։ Ժողովրդեան ամբողջականութիւն է՝ 8037։

Բ. Աւագութիւն Ախալցխոյ (Տփղիսու

նահանգ)։ Աւագ քհ. Տ. Սերովբէ Մերաբաշվիլի։ Ժողովրդապետութիւնք. 1. 2. 3. և 4. Ախալցխա, 5. Բորժոմ, 6. Մղալթիա, 7. Աքաթիւ, 8. Սուխլիս, 9. Վալէ, 10. Մինուբան, 11. Նէոխրէք, 12. Ուդէ, 13. Արալ, 14. Բալաջուր, 15. Ճալզա, 16. Ղուլալիս, 17. Արասթուման։ Ժողովրդական թիւր՝ 9911։

Դ. Աւագութիւն Ախալքալաքի (Տփղիսու նահանգ). Աւագ քհ. Տ. Պետրոս Տէր Պօղոսեան։ Ժողովրդապետութիւնք. 1. Խիզաբաւրա, 2. Ալտատան, 3. Վարեւան, 4. Տաւրցխ, 5. Խուլգումոյ, 6. Բաւրա, 7. Կարտիկամ, 8. Թորիա, 9. Ուէմանա, 10. Էչարա, 11. Վարգավ, 12. Բնէլա, 13. Ախալքալաք։ Ժողովրդական թիւր՝ 12,599։

Դ. Աւագութիւն Ալեքսանդրոպոլի (Երեւանու նահանգ)։ Աւ. քհ. Հ. Էմմանուէլ Մաշուր։ Ժողովրդապետութիւնք. 1. Ալեքսանդրոպոլ, 2. Թափասոլլակ, 3. Բարաքիլիսա, 4. Ալեքսանդրովկա, 5. Փալութլի, 6. Բաֆիարլի, 7. Բայդուլի-Ղազանչի, 8. Մուսալուիլի, 9. Ղրաբլա, 10. Շիշթափա, 11. Զիմեանքով (Միմէլի, Բաջբրխանա), 12. Դարաքէվ, 13. Թիթոյ-Խարաբա, 14. Կոյրաղբիւր։ Ժողովրդական թիւր՝ 11,129։

Ե. Աւագութիւն Կարուց (Կարուց նահանգ)։ Աւ. քհ. Հ. Սարգիս Յովսեփեան։ Ժողովրդապետութիւնք. 1. Կարս, 2. Խարախաչ, 3. Ախրիլիսա, 4. Դաշկով, 5. Ելիզաւետգա (Գիւլէյրան), 6. Արգանան, 7. Սասագէլ, 8. Ուր, 9. Օլթի, 10. Օլոր, 11. Սարըքամիշ, 12. Կաղզուան. Ժողովրդական թիւր՝ 4172։

Զ. Աւագութիւն Լոռուայ (Տփղիսու նահանգ)։ Աւ. քհ. Հ. Սարգիս Եազըճեան։ Ժողովրդապետութիւնք. 1. Շահնազար, 2. Աւեւմանովկա, 3. Խոթաւ-Բուլաք, 4. Արմանիսա, 5. Սարչապետ (Շրջարերդ), 6. Փոքր Շիշթափա։ Ժողովրդական թիւր՝ 7787։

Է. Աւագութիւն Սիմֆերոպոլի (Տաւրիկեան նահանգ). Աւ. քհ. Հ. Աթանաս Աւետիսեան։ Ժողովրդապետութիւնք. 1. Սիմֆերոպոլ, 2. Խարասու լաղար, 3. Եւպատորիա, 4. Թէոդոսիա, և 5 մանաւոր հոգաբարձութիւն, 6. Եկատերինոդարի հոգաբարձութիւն, 7. Բեսարաբիոյ նահանգին հոգաբարձութիւն։ Ժողովրդեան թիւր՝ 5212։

«Դումար ժողովրդական երկու սեռի Հայ-Կաթողիկաց ի Ռուսաց Կայսրութեան (որքան ցարդ յայտնուած է՝) 61,534։»

Այս ծանօթութիւններէն սոսմիջապէս վերջը գրուած է մի «Այրուբենական ցանկ, Հայ Կաթողիկեայ եկեղեցականաց ի Կայսրութեան Ռուսիոյ», անոնց ծննդեան, քահանայութեան և պաշտօնին թուականներովն, անոնց (պաշտօնավարողներուն) թիւը կը հասնի մինչեւ 75։ Նոյնպէս գրուած է ուրիշ ցուցակ մը եկեղեցիներու, մատուռներու և Հայ Կաթողիկէից բնակած տեղերու։

Ուրիշ յաւելուած մը կայ, Հայերէն և Ռուսերէն, Կայսերական Տան անդամներուն կարճ կենսագրականով և անոնց համար յատուկ օրերու մէջ մատուցուելիք մաղթանքներով։

*
* *

Երրորդ մասը ուրիշ բան չէ եթէ ոչ երկրորդ մասին Ռուսերէնը։

Այս գեղեցիկ կազմակերպութեան գլուխը կեցող, և իմաստուն վարչութեամբ ասոր առաջնորդող, Գեր. Սարգիս Գերապայծառ Տէր-Աբրահամեան յիրաւի շնորհաւորելի է իր անխոնջ ու ուքնաջան աշխատութեանն համար, ի փառս Աստուծոյ, յօգուտ Կաթողիկութեան և ի փրկութիւն հոգւոց։ Այս գրքոյկը նիւթականապէս իսկ, ցոյց կուտայ այս մեծ կազմակերպութեան նաև քարոյական կարգաւորութիւնը։ Կը մաղթենք իրեն բարեյաջող ելք իր ամէն բարի ձեռնարկներուն։ Զարմանալի բան է և յիրաւի գիտութեան և խորունկ մտածութեան իսկ արժանի՝ որ, միակ Մեծաւոր մը, որ գեռ՝ պարագայից քերմամբ, եպիսկոպոսական տասիճան ալ չունի, կարող կ'ըլլայ վարել այսքան բազմաթիւ քահանաներն ու ժողովուրդը, որոնք անխտիր և անդիմադիր կը հնազանդին իրեն. այս երեւոյթին օրինակ պակասիքը լ՞ուչ է արդեօք։ Անոնք իրենց

Առաջնորդը կը յարգեն իբրեւ նախ Աստուծոյ, ապա Յիսուսի Փրկանորդին ներկայացուցիչ. հետեւապէս՝ ո՛չ քննադատութիւն, ո՛չ անհնազանդութիւն, ո՛չ ըմբոստացում։ Անոնք Քրիստոսի ճշմարիտ ոչխարներուն պէս իրենց Հովուին ձայնին ետեւէն կ'երթան և չեն ուզեր փրկութեան ճամբէն հեռանալ, զի ով որ իր Եպիսկոպոսին հետ է, Եկեղեցւոյ հետ է, Ս. Քահանայապետին հետ է, Քրիստոսի հետ է։ Ա՛յսպէս ահա սիրած կ'ըլլան իրենց ազգն ալ, համայնքն ալ, ընտանիքն ալ. այսպէսով կը պատրաստեն ճշմարտապէս կրօնասէր Կաթողիկեայ սերունդ, որ աշխարհի օր ըստ օրէ ընդհանրացող ապականութեան մէջէն՝ Նոյեան Տապանով, Պետրոսի նաւակով պիտի պրծի անկորուստ։

Ահա ա՛ս է անոնց հոգեկան վիճակը, որ Աստուծոյ մանաւոր մէկ շնորհին արդիւնքն է, զոր կը մաղթենք Աստուած անարատ պահէ, որ գո՛նէ անոնք յառաջադիմեն առանց վնասաբեր և կորստաբեր բանակռիւներու եւ անհնազանդութեան։ Հզօր է Աջ Բարձրելոյն. եթէ ապերախտ մարդիկ՝ կամ անզուսպ կիրք քակեն խոպանացնեն իր այգին, կը տնկէ զայն այլուր, հեռո՛ւն եւ կ'առատացնէ հարիւրապատիկ զուարթառատ պտուղներով։ պէտք է միաքան աղաչենք. «Թող զդա այս ամ եւս . . . քերեւս արասցէ պտուղ. ապա թէ ոչ յամէ եւս հատցես զդա»։

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

ՊԷՇԻՆՃԻ ՊԱՊ

Յիսուս Քրիստոս եկաւ ինեան եվլաթը վէ եէմ եէ Ալլահըն էվլաթը տըր։

Էվվէլ էմիրտէ չուրասընա տիգգաթ օլընմալը տըր քի Յիսուս քէնտի քէնտիսինի Ալլահ թէսմիյէ էթմէսիյլէ պէրապէր աչըդան աչըղա Բէտէր Ալլահնան օլան ֆարգընը թասդիգ էտիյօր։ Բէնտինի իրսալ էյլէյէն Բէտէր Ալլահ օլաուղընը, քէնտիսի օնուն իյլէրինին իճրասընտա պուլունտուղընը, օնուն իրատէթինէ թապի իտուկինի իգրար էյլէյօր. օնա տուա էտիյօր, օնունլա տախիլէն գոնուշույօր։ «Բէտէրիմ պէնի սէվէր . . . պէնիմ նաֆգադամ բէտէրիմին իրատէթինի եարմագ տըր . . . պէն տախմա բէտէրիմէ խօշ օլանը եարարըմ . . . բէտէրիմէ տուա էտէճէյիմ, բէճատա պուլունաճաղըմ . . . Է՛յ Բէտէր, տախմա պէնիմ ըէճամը գապուլ էտէր օլտուղընը պիլիրիմ . . .» Պունլարլա միւքէմմէլ սուրէթտէ ֆարգընը պէյան էյլէր։

Բէզալիք Յիսուս քէնտի իլէ վաֆթիկի էնտասընտա իւզէրինէ էնէն, չակիրտլէրի իւզէրինէ իւֆլէտիյի, հագիգաթ վէ գուսիյէթ բուհը մագամընտա պիլճիւմլէ մէվլիպէլէրիյլէ չակիրտլէրինէ վատ իթտիյի Հոգին Սուրբ արասընտա տախի ֆարգ վար օլտուղընը թաստիգ էտիյօր. «պաճգա պիր միւքեսկիլի (մխիթարիչ) իրսալ էյլէմէսի իչիւն Բէտէրիմէ բէճա էյլէյէճէյիմ . . . պէն սիզէ հագիգաթը սէօյլէյօրըմ, պէնիմ կիթմէքլիյիմ իսայբրլը տըր, չիւնքի էյէր պէն կիթմէզսէմ, Մխիթարիչ կէլմէյէճէք տիր սիզէ, ֆագաթ պէն կիտէրսէմ, օնը սիզէ եօլլարըմ։»

Պինաէն ալէյհ, Յիսուս աչըգտան աչըղա քէնտիսինի Հայր վէ Հոգին Սուրբտան թէֆրիգ էտիյօր։ Ֆագաթ հիչ պիր վագըթ Որդիտէն թէֆրիգ էթմէյօր, օնտան պահս իթտիյի վագըթ թամ քէնտիսինատէն պահս իտիյօր կիպի սէօյլէյօր։ Որդի քէնտիսի տիր։ Էվվէլթ, հէմ տէ պու էվլատ իսմինի օ կիպի պիր հալտէ, էօյլէ պիր մանատա ալըր քի քէնտիսինին Բէտէր Ալլահ վէ Բուհուլլահա քեամիլէն միւսավի օլտուղը գաթիէն անլաշըլըր։ Շու նուրանի վէ տէրին սահիֆէյի տինլէյին վէ թէէմիւլ իսինիզ։ «Պէն եօլ, հագիգաթ վէ հայաթըմ։ Հիչ քիմսէ պէնսիզ Բէտէրիմէ կիտէմէզ։ Փիլիպպոս օնա, Եա՛ Բապպ, Բէտէրի պիզէ կէօսթէր վէ օ քեաֆի տիր պիզէ, տէր։ վէ Յիսուս. Պու գատար վագըթ տըր սիզինլէ պէրապէր օլտուղըմ հալտէ տատա պէնի թանըմատընը՞զ մը, պէնի կէօրէն Բեսkrիմի տէ կէօրմիւշ օլուր։ էօյլէ իսէ նասը՞լ պանա բէտէրի պիզէ կէօսթէր տէյօրսունըզ։ Պէնիմ Բեսkrտ վէ Բեսkrին տէ պէնտեսk օլտուղունա ինանմայո՞ր մը՞ընը՞զ։ Հիչ տէյիլսէ եարարըղըմ չէյլէր իչուն ինանընընը՞զ։ Սահիհ սահիհ տէրիմ սիզէ

(*) Տես թիւ 131, էջ 54

քի, պանա ինանան պէնիմ եաբուրգլարըմը քէնտի տէ եաբաճագ տըր. ծնլարտան տահա պէօյիւքլէրինի տէ եաբաճագ տըր. չունքի պէն բէտէրէ կիտիյօրում վէ պէնիմ նամըմա բէտէրտէն հէր նէ քի իսթէյէճէք օլուրսանըզ եաբաճաղըմ՝ Բհտերին եվլատտա իհթիշամ պուլմասը իչուն։ Էյէր պէնի սէվէրսէնիզ, թէնպիհլէրիմի հրգզ իտինիզ, պէնտէ սիզէ պաշդա պիր միւթէսէլլի իրսալ էյլէմէսի իչուն բէտէրէ բէճա իտէրիմ քի թանըմատըզը վէ կէօրմէտիյի իչուն տիւնեանըն գապուլ էտէմէտիյի հագիգաթ ռուհը տահիմա սիզինլէ պէրապէր գալսըն։ Էյէր պիր քիմսէ պէնի սէվէրսէ, քէլամըմը թութար վէ բէտէրիմ տէ ծնը սէվէճէք տիր, վէ օնա կէլէճէք վէ օնտա սաքին օլաճաղըզ ճէվապը վէրիր։»

Իչթէ սանա Ամենասուրբ Երրորդութիւնըն իւչ անձլարը. իչթէ ծնլարըն արասընտաքի բապլթա վէ ֆարգ։ Պու իւչ անձլար արասընտա (Որդի) էվլատ Ցիսուս ադը։ Ինսանըն, հաթթա տիւնեանըն մէվճուտիյէթինտէն էվվէլ քէնտինին մէվճուտ օլտուղընը պու սրֆաթըյլա թաստիգ էտիյօր. «Սահիհ սահիհ սէրիմ սիզէ, Աբրահամըն վար օլմասընտան էվվէլ պէն վարըմ»[1]։ Վէ Վերնատուունտա էթտիյի տուատա «Եա՛ Ալլահ, տիւնեա վար օլմազտան էվվել սէնտէ մալիք օլտուղըմ իհթիշամիլէ պէնի թէքրար իհթիշամլա՛»[2], պույուրըր վէ պունըն նէթիճէսի օլարագ չու ղարիպ իֆատէլէրտէ պուլընըր. «Պեն տիւնեանըն նուրբյըմ... պեն տիւնեայա նուր կելտիմ... պենիմ արգամսբրա կելեն զուլմեթտ եիւրիւմեզ... պեն եօլ, հագիգաթ վե հայաթ ըմ... պեն պաշլանկրն ըմ, պեն գբյամ վե հայաթ ըմ... պեն սեմավաթտան ենմիշ օլան տիրի եմեյիմ...»։ Էյէր պու քէլամլար պիր Ալլահ քէլամլարը օլմասալարտը, պիր տիվանէ իֆատէլէրի օլաճագլարտը վէ օնուն տուտագլարընը եագաճաղլարտը. հալպու քի Ցիսուս պիր սիւքունը իլահի իլէ ծնլարը թէլէֆֆիւզ էտիյօր։ Պու գատար եէնի օլան չու պէյանոթի էնասընտա ծնուն իւզէրինտէ էն ուֆագ պիր մաղրուրլըգ, պիր թէքէպպիւր վէ եախօտ հէվաբէրէսթլիք ֆիքրի պուլամազսըն։ Օ՝ սատէլիք վէ ուլվիյէթէ մախսուս վէ հագիգաթը սէօյլէտիյինէ էն աչըգ տէլիլ օլան պիր թավր իլէ հէմ սէօյլէր վէ հէմ տէ մուամէլէ էտէր։

Եալընըզ Ալլահա խաաս օլան էվսաֆը ճէլիլէնին քեաֆֆէսինի իւզէրինէ ալմագլա իքթիֆա էթմէյիպ, Ալլահա մախսուս օլան իշլերին տէ պիլ ֆիիլ իճրասընտա պուլունը։ Պագընըզ, Ալլահ կիպի իտարէի քէլամտա պուլունույօր. «Էվվելիյիրէ տենիլմիշ տիր, Ֆագաթ Պէն սիզէ տերիմ ֆի...»[3] Ալլահ կիպի էմր վէրիյօր «Կիտինիզ, պիւքիւն միլլեթլերի բալիմ իտինիզ, սիզէ բենպիհ իբտիյիմ ճեյլերին ֆեաֆֆեսինի թուրմայը հոյրետինիզ օնղարա. ԻՇԹԷ ՏԻՒՆԵԱՆԸՆ ՍՕՆՈՒՆԱ ԳԱՏԱՐ ՊԷՆ ՍԻԶԻՆ ԻԼԷ ՊԷՐԱՊԷՐԻՄ»[1]։

Ալլահ կիպի աֆվ էտիյօր. Եահուտիլէր «Կիւնահլարը Ալլահտան մատա ֆի՛մ աֆվ էտեպիլիր» ատտիքլէրինտէ, քէօթրիւմէ տէօնէրէք «Այաղա գալգ, պեն սանա եմր ետիյորում»[2] պույուրուր. Մագդաղենացիյէ խիթաբ էտիրէք. ծնուն քէնտի (Ցիսուս) հագդընտա օլան պէօյիւք մուհապպէթինին խաթրը իչուն, Ալլահա գարշը իշլէմիշ օլտուղը պիլմիւմլէ կիւնահլարը քէնտինէ (Ցիսուսա) գարշը իլթիզամ իտիլմիշ պօրճլար կիպի աֆվ էյլէր։ Նիհայէթ, Ալլահ կիպի հիւքմ էտէր. տիւնեանըն սոնունտա էթրաֆը գուտրէթ վէ իհթիշամ իլէ իհաթա օլունմուշ օլարագ պուլուրթլար իւզէրինտէ թէքրար կէլէճէյինի, քեաֆֆէի միլլէթլերին սոն վէ էպէտի գարարը ալմագ իւզրէ տիթրէյէրէք հուղուրընտա ինթիզար էտէճէքլէրինի, վէ հաքիմի էքրէմ սրֆաթրյա ծնլարըն գաթի սիճիլինի վէրէճէյինի իխպար էյլէր[3]։ Տահա ֆազլասը վար. Ալլահա մախսուս էվսաֆը ճէմիլէնին քեաֆֆէսինի իւզէրինէ ալմագ վէ Ալլահըն գուտրէթ վէ իգթիտարընա սահիպ օլտուղընը թաստիգ էթմէքլէ պէրապէր, Ալլահա եաբզըրը օլան թազիմ, թէքրիմ վէ իհթիրամտա հագգը վար օլտուղընը տա իլավէ վէ պի-

[1] Ցովհ. Ը. 5—8։ [2] Ցովհ. ԺԷ. 5։

[1] Մատթ. Ե. 28։—Ղուկ. Ե. 20, 24։—[3] Մատթ. ԻԵ. 34։

հաէն ալէյհ թալէպ տէ էտիյօր։ Իսանը. «Ալ-յահա իսան էտիյօրսունիզ, պանա տա իսան էտինիզ[1]»։ Մուհապպէթի, հէր չէյտէն իսա-թիւն, բէտէր, վալիտ, զէվճէ վէ էվլատ-տան իսթիւն պիր մէհապպէթլէ. էօլիմ-սէն տէ չէքինմէյէն պիր մէհապպէթլէ սէ-վիլմէյի իսթէյօր. քէնտի իչուն էօլէնլէրէ է-պէտի հայաթ վատ էյլէյօր[2]։ Տուայը. Պէնիմ իսմիմի Բէտերիմտէն հեր նէ յի իսթէյէնէք օ-լուրսանիզ, պէն օնը եաբանաղրմ էի Բէտեր էվլատտա շերեֆ պուլսուն[3]».

(Մաթթի վար)

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

(Շար.)

15. Իսրայէլացւոց սրբազան Աւետարանքն Մովսէս ալ, որ հրաշալի ամպին հովանւոյն ներքեւ (որուն մէջ Տէրը պահուըտած էր) հրաշագործ գաւազանը ձեռքը կ'իջնէ Երիգրէական ջուրերուն մէջ և չոր ու ապահով ճամբայ մը կը բանայ Իսրայէլի ժողովուրդին խոստացուած երկիրը հասնելու համար, ինչ բրաւ. ուրիշ բան չըրաւ, բայց եթէ՝ պատկերացնել Յիսուս Քրիստոսը՝ որ իր երկնաւոր Հօր խօսած ամպին մէջէն՝ խաչին նուիրուելով կ'իջնէ այսօր Յորդանանու վտակներուն մէջ և անոնցմով դիւրին ու ապահով ճամբան կը բանայ Քրիստոնեայ ժողովուրդին դէպի երկինք։ Մանաւանդ Ս. Պօղոս առաքեալն ըսած է թէ՝ այն հրաշալի անցքին մէջ ամպը եղաւ իրը Զեն, ծովուն ջրերն իրրեւ Նիւթն, Մովսէս՝ Պատանեայն, և այնպէս Իսրայէլացիք հրաշալի ու մարգարէական մկրտութեամբ մը մկրտուեցան, որուն լրումն ու իսկականն է, այսօրուան Յիսուսէ Քրիստոսէ հաստատուած Մկրտութիւնը։

16. Յեսու իր անունովն ալ Յիսուսի հաւատարիմ նախանկարն է. զոր յաւագոյն կերպով պատկերացուց այսօրուան խորհուրդն ալ։ Թէ՝ Յորդանան գետը գետեղուած Տապանակ Ուխտին մէջ, և թէ ջրերուն մէջ՝ որոնք մասամբ մ'իրենց ակնադիւրը կը դիմեն, մասամբ մ'ալ դէպի ծովը կը վազեն և գետին չոր յատակը կը ներկայացնեն Իսրայէլացւոց ժողովրդեան անցքին համար, ինչպէս կարելի չըլլայ չը նշմարել աստուածային ձեռքով կանխաւ նախանկարած այսօրուան խորհուրդը. ասոր համար Յիսուս ասաս իր սրբազնասուրբ մարմնովը որ իսկական Տապանակ Ուխտին է և չէ թէ Օրինաց տախտակները կը կրէ հապա նոյն ինքն այս միւնոյն Յորդանանը մանող Օրէնսդիրը, իր հաստատած մկրտութիւնով աշխարհի անօրէնութեան հասանքը կը կիսէ, և մաս մը կը ներէ ու մաս մը կը դատապարտէ ու կը բանայ այն ճամբան որ Քրիստոնեայ ժողովուրդին կ'առաջնորդէ դէպի երկնային Քանանը։ Կամանաւանդ թէ Յիսուսի Քրիստոսի Մկրտութիւնը ոչ միայն նոյն գետին մէջ, այլ նաև Յեսուայ գետին՝ միւնոյն հրաշք գործած տեղը կը պատահի, և այդ հրաշքը կը զուշակէր նաև մեծագոյն սքանչելիքը զոր յետոյ գործեց Յիսուս Քրիստոս։

Բայց ինչպէս և ուրիշ արդեօք կը պատահի, կը հարցնէ Ս. Պետրոս Ոսկեխօսը, որ այս միւնոյն գետին ջրերը՝ որոնք Օրինաց Տապանակին ներկայութենէն կարծես սարսափահար փախուստ տուին, ոչ միայն նմանօրինակ ետ չեն քաշուիր Ամենասուրբ Երրորդութեան ներկայութենէն, այլ կը մղուին, կը ժողուին, կը խառնին և Յիսուսի Քրիստոսի Մարմնոյն շուրջը կը պատեն ու անձկանօք անհամբեր կը փափաքին դպչիլ, լուղել և համբուրել յարգանօք այն ամենասուրբ մարմինը։ Ա՛խ, գիտէ՞ք արդեօք ո՞րն է ասոր պատճառը՝ կը պատասխանէ միւնոյն Հայրը. Տապանակին ներկայութենէն տարբերուն փախչելովը՝ Աստուած ուզեց Իսրայէլի ժողովրդեան սրտին մէջ ձգել իր մեծվայելչութեան վախը. այն վախը որ հին Ուխտին սկզբնաւորութիւնն էր։ Սակայն այսօր անոր նման բան մը չի պատահիր. վասն զի Ամենասուրբ Երրորդութիւնը ուրիշ բան չի գործածեր՝ բայց եթէ շնորհք. ուրիշ բան չի յայտներ, չի խօսիր՝ բայց եթէ սէր։ Ս. Ամբրոսիոս կ'ըսէ. Թէպէտև Յիսուսի Քրիստոսի Յորդանան գետը մտած ատեն ոչ միայն ջուրերուն փախուստ տուին հին հրաշքը չի պակսեցաւ, այլ աւելի փառաւոր և աւելի վսեմ կերպով մը կատարուեցաւ. ինչու ոչ Յեսուայ ժամանակ նիւթական ջրերն էին ետ քաշուողները, բայց այսօր Յիսուսի Քրիստոսի ներկայութեամբը ետ ետ կը քաշուին ու կը փախչին շատ տարբեր կերպով գայլայլից և մեղքերով ծանրացած ջրերը։ Եւ ինչպէս որ Յորդանանու ջրերը Յեսուայ հրամայելովը իրենց ըղմած տեղը վերադարձան, այնպէս ալ Փրկիչ Աստուծոյ խորհրդովը մարդիկ իրենց նախկին անմեղութեան՝ սկզբնական շնորհաց կը վերադառնան որով զարդարած էր դիրենք Ստեղծող Աստուածն։ Իրաւ ալ Ս. Պօղոս կ'ըսէ թէ Մկրտութեամբ մենք նոր մարդը կը զգենուինք, նախնական մարդը որ Աստուծմէ ստեղծուեցաւ սրբութեան և աստուածային ճշմարտութեան արդարութեան մէջ (Պօղոս. Գ.)։

17. Վերջապէս, Ասորւոց Նեեման թագաւորին պատմութեան մէջ ալ խորհրդանիշ կերպով նախագուշակուեցաւ Մկրտութեան խորհուրդը, երբ Եղիսէ Մարգարէն թելադրուեցաւ այն հպարտ հեթանոսին որ երթայ և եօթն անգամ Յորդանան գետը

---

[1] Յովհ. Գ. 1։ [2] Մատթ. Գ. 37։ — [3] Յովհ. 15։

լուացուի, և պիտի սրբուի ամենագարշելի բորոտութենէն որով լեփլեցուն էր մարմինը (Դ. Թագ. Ե.). Նախ նախատուած սեպեց ինքզինքը այնպիսի չնչին դարման մը ստանալուն համար։ Միթէ Ասորեստանի գետերն ալ հաւասարապէս լաւ չէ՞ն լուացուելու համար քան։ Ս. Ամբրոսիոս անոր համար կ'ըսէ. Անխե՛լք, Յորդանանու ջուրը միւս գետերուն չի նմաներ, վասն զի անոր ջուրը հրաշագործ և մարգարէական է. և օր մը մարդացեալ Աստուծոյն հոն լուացուելովը պիտի սրբագործուի։ Արդ՝ Յորդանանու ջրերուն մասնաւոր մէկ յատկութենէն չէ, հապա՝ ճիշդ այն աստուածային լոգանքին և արդիւնքին զօրութեամբը՝ որոնք կանխելով քեզ պիտի մերձեցուին հիմա, պիտի բժշկուիս։ Բայց բարեբախտութիւն մ'է։ զաւ Նեեմանայ համար, որ հաւանեցաւ վերջապէս Յորդանանու մէջ լուացուելու. և իսկոյն իր մարմնոյն բորոտութենէն բուժուելով՝ հասկցաւ ու երեւակայեց այն վայրկենէն թէ՝ ամէն ջուր լաւ չէ հոգւոյ բորոտութիւնը բուժելու համար, հապա՝ Յորդանանու ջուրը՝ այսինքն Մկրտութեան՝ որ Յորդանանու մէջ հաստատուեցաւ, և թէ մեղքերու թողութեան հրաշքը ջուրը չէ որ կ'արտադրէ՝ այլ անոր կցուած շնորհքը։

Բայց, ուշադրեսէք և հպարտ Նեեմանը այն հրաշագործ լոգանքն ընելու զրկողն ո՞վ էր. իր ամենէն դեւատի գերուհին, որ թագաւորին ու թագուհւոյն ծառայութիւն մատուցանելու սահմանուած էր։ Արդ՝ այս խելացի աղջիկը՝ կ'ըսէ Ս. Ամբրոսիոս, ճշմարիտ Եկեղեցւոյ օրինակը նշանակեց, որ թէեւ աղախին նախապէս և հպատակ կռապաշտ միսպետներու, ժամանակաւոր օրինօք, սակայն իր քարոզութեամբն ու խրատներովը համոզեց նոյն իսկ իր գոռոզ տիրակալները և անոնց աւերդապաշտ և ունայնասէր ժողովուրդները՝ Յիսուսի Քրիստոսի մարգարէական խօսքերուն ականջ դնելու թէ՝ ով որ կը հաւատայ ու կը մկրտուի, պիտի փրկուի։ Ո՜հ, երանի մեզ, որ այս գորովագութ մօր՝ Եկեղեցւոյ խնամքով՝ ընդունած ենք այս փրկարար լոգանքը, որ ջնջեց մեր մէջ եղած մեղքին բորոտութիւնը, և մեզի վերածնունդ տուաւ դէպի իսկական առողջութիւն, դէպի շնորհք, դէպի Յիսուսի Քրիստոսի կեանքը, որուն վրայօք միայն երկու խորհրդածութիւն ալ ունիմ ընելու։

(Շարունակելի)

Թարգմ.

Մ. Վ. ՄԵՂՄՈՒՆԻ

ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՓԱՀԱՆԱՅԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆՑԻՈՑ ՈՐՔ ՑԱՐԵԱՆ Ի ՎԵՐԱՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԻՐԵԱՆՑ ԵՒ ՀԱՆԻՆ ԶՆԱ Ի ԳԱՀԷՆ ՎԱՍՆ ՄՈՒՖԹՈՒՆ ՈՐ ԵՒ ՍՊԱՆԻՆ ԶՆԱ

Ինչպէս ըսած էինք «Արձ.»ի 103 թիւին գլխակարգ ծանօթութեան մէջ, (Գ. տարի, էջ 435), ներկայ գրութիւնը Տ. Կոմիտասայ պատմական երկասիրութիւնն է, եւ իր ժամանակը (1703) պատահած եղերերգական գահընկեցութեան մը պատկերալից ու կորովի պատմութիւնն է:

1648էն ասդին չորս թագաւորներ նստած էին Օսմանի գահուն վրայ: Սուլթան Մէհէմմէտ Դ. որդի Իպրահիմայ Ա. ոյ. վեց տարեկան էր երբ թագաւորեց այն տարին եւ տուրջ երեք տարի մնաց իր մեծ մօր՝ գերահռչակ Քէօսէմ Սուլթանի՝ Մուրատ Դ.ի կնոջ հզօր խնամակալութեան տակ, մինչեւ որ նա պատմութեան մէջ մինչ տեսնուած եղերական վախճանով, զրեթէ նման Ներոնի մօր Ագրիպպինայի, ներքինիներէն խժդժօրէն սպաննուեցաւ:

Կարի որսասէր էր այս թագաւորը, որ վասն եւ մականուն ստացաւ՝ Ավճի Մէհէմմէտ Սուլթան: Իր օրով պատահեցաւ Վիէննայի պաշարման ձախողանքը եւ Սոպիէսքիի յաղթանակը: Գահընկէց եղաւ 1687ին, եւ յաջորդեց իրեն Սիւլէյման Բ. իր եղբայրը, 1687—1691: Ասոր յաջորդեց Ահմէտ Բ. միւս եղբայրը, 1691—1695: Երբ սա եւս մեռաւ, թագաւորեց Մուսթաֆա Բ. որդի Մէհէմմէտի Դ.ի, ծն. 2 Յունիս 1664, գահակալեց ի 6 Փետր. 1695: Իր ժամանակին երեւելի զորձերէն է 1695 Փետր. 8-9 գիշեր Վենետկեցւոց նաւատորմիղին անաւոր ջախջախումը՝ Ամուճազատէ Հիւսէյին Գարթան փաշայի կողմանէ, որ զրաւեց Բիոս կղզին.— Զէնթայի չարաչար պատերազմը՝ զոր Օսմ. բանակը կրեց մեծամեծ կորուստներով, Աւստրիոյ Էօժէն անուանի զօրավարէն.— Գարլովիցի (Գարլոֆչա) դաշնագիրը, ադիտաբեր տոնեն տեսակէտով, ի 26 Յունուար 1699: Մուսթաֆա Բ.ի օրով Մեծ-Վէզիր (Սա'տրը-ազամ) եղած են հետզհետէ՝ Սիւրմէլի, Մէհէմմէտ Էլմաս, Ամուճազատէ Հիւսէյին, Տալթապան Մուսթաֆա եւ Բամի Մէհէմմէտ փաշաներ:

Ներկայ պատմագրութեան իմացուածին համար այս հակիրճ ծանօթութիւնը կարեւոր դատեցինք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Յետ պատերազմելոյ ազգին Օսմանցւոյ՝ Սուլթան Մէհէմմէտի չորրորդի, յորդւոյ Իպրահիմին, ի թուականիս մերոյ ՌՃԼԱ (1131=1684) յորոյ սկիզբն եղեւ պատերազմիլ ընդ Ճերմանացիս՝ որք են Ավս-

մանքն և այժմ կոչին Նէմցէք[1]։ Եւ յայնմ պատերազմի պատճառէ խռովեցան ընդ Օսմանցիս ա՛յլ և ազգն Բոլոնացւոց, Հունաց և Վենիժացւոց[2], միաբանելով ընդ Ալամանն. վասն որոյ և յարեան նոքա ի վերայ Օսմանցւոց իւրաքանչիւր ազգն և առին զբազում տեղիս և զքաղաքս մերձ առ ինքեանս եղելոցն յՕսմանցւոց, որ և երկարեցաւ պատերազմ այն իբրեւ զամս ութեւտասն։ Եւ ամ յամէ գնային Օսմանցիքն և յաղթեցեալք ի նոցանէ ամօթով յետս դառնային. մինչեւ եհաս թուական Հայոց ՌՃՆԷ (1698), ապա զխաղաղութիւն արարին ընդ միմեանս, ի չորրորդում ամի թագաւորութեան Սուլթան Մուսթաֆայի յորդւոյ Մէհէմէտին, քանզի ընդ յերկարումն՝ չորք թագաւորք եղեն փոխեցեալք։ Նախ առաքեցին Օսմանցիքն զդեսպանս առ ազգն Ալամանաց սակս խաղաղութեան, և ապա ի վերոյգրեալ ազգացն եկին դեսպանքն ի Կ. Պոլիս, առ թագաւորն Օսմանցւոց ի Սուլթան Մուսթաֆայն, և կռեալ զդաշինս ընդ միմեանս արարին զխաղաղութիւն, և դարձան դեսպանքն Քրիստոնէից իւրաքանչիւրքն փառաւորութեամբ ի տեղիս և առ թագաւորս իւրեանց։

Իսկ Օսմանցիքն զկնի խաղաղութեան՝ հանդերձ թագաւորաւն իւրեանց գնացին և նոքա ի քաղաքն յԱտրիանուպոլիս և նստան անդ։ Բայց թագաւորն Սուլթան Մուսթաֆայ ի ժամանակի տղայութեան իւրոյ՝ ունէր ուսուցիչ և վարժապետ դպրութեան՝ զոմն Կարնեցի Ֆէյզուլլահ անուն, որ էր փեսայ Վանի էֆենտուն։ Եւ ի թագաւորելն իւրում առաքեալ երեր զհօճայն ի Կարնոյ և արար իւրն Մուֆթի, որ կոչի շէյխ-իսլամ. և զամենայն խորհուրդս իւր ընդ նմա առնէր և նմա լսէր, և այլոյ ումեք ոչ հաւատայր զինքն՝ բաց ի նմանէ։ Եւ զոր ինչ գործէր նորին հրամանաւն և նորին խորհրդակցութեամբն գործէր. և այլոց խօսից ոչ հաւատայր և ոչ լսէր երբէք։ Վասն որոյ իբրեւ ետես Ֆէյզուլլահ Մուֆթին այն՝ որ անհամ Ֆեռզանցի[1] գոլով՝ եթէ հաւատայ թագաւորն ամենայն խօսից իւրոց, այնուհետեւ սկսաւ գողանալ զմիտս նորա և յինքն հանգուցանել խաբողական և պատրողական բանիւք և ևս հաճոյանալ մօր թագաւորին և հաճիլ զկամս նորա, և մերթ առ մերթ երթեւեկութիւն առնելով առ նա՝ և խօսակցելով ընդ նմա՝ զնորա միտն ևս յինքն ծրարէր, նաև զամենայն պալատականն համանգամայն՝ զամենայն առ ինքն ձգէր. որոյ սակի ասէին իսկ եթէ հմուտ և քաջ գոլ ի յարհեստս կախարդութեան և նոքօք որսայր զկամս այլոց և հաճոյանայր նոցա, և զսմանս կախարդական դեղօք իբրեւ զանասունս առնէր, թափելով ի զգայութենէ, ի խելից և ի մտաց, և ինքն յառաջեալ յամենայն գործս յարքունական, մինչ գրեթէ ամենայն ումեք յակնկալութիւն առ նա հայէր, և զնմանէ կախեալ կային թագաւորն և մայրն իւր և բովանդակ պալատն արքունի, որպէս ասէ Տէրն՝ «Յորժամ զհզօրն կապեսցէ՝ և ապա զամենայն զտունն նորա յաւար հարկանիցէ։»

Այսպէս և սա՝ նախ զթագաւորն և զմայրն կապեաց առյինքն և ապա սկսաւ զիշխանութիւնն նորա յափշտակել. իսկ յարտաքոյ եղեալ մեծամեծացն՝ ի վէզիր ազամէն[2] սկսեալ մինչ ի չնչին իշխանութիւնս նոցա զձեռս արձակեալ. վասնզի հրամանաւ նորին ի յանկ ելանէր և կատարիւր ամենայն իշխանութիւն, որ և ամենայն դրունք մեծամեծացն ամայի և ունայն մնային ի գործոյ. քանզի խնդրողք զիշխանութիւնս՝ զվէզիրութիւնս, զփաշայութիւնս և զայլ ամենայն գործս իշխանութեան, առ դրունս նորա դեգերէին զբազում աւուրս, բազում աղերսանօք՝ մանաւանդ բեռնայիր և ձեռնայիր կաշառօք, դենարիւք և դահեկանօք, այլեւ զանազան պէսպէս մեծածախս ընծայիւք. վասն որոյ այնու փառաւորութեամբ լայնացեալ, ստուարացեալ, յղփացեալ ելից զամենայն աշխարհս որ ընդ ձեռամբ թագաւորութեան Օսմանցւոց էր, միլէով, մալիֆեանէով, կալուածովք, ագարակօք, և

[1] Աւստրիացիք։

[2] Լեհք, Ռուսք եւ Վենետիկցիք։

[1] Որդի Պարսկի, այսինքն պարսիկ ազգաւ։

[2] Մա՛տրը-ազամ;

չիֆթլիկօք[1], յամենայն կողմանն զձեռս արձակեալ բռնաբարէր, յապոէր և յափըշտակեալ բերէր, և զակն իւր ագահ ոչ յագեցուցանէր։ Եւ արդ՝ վասն յայսմ առաւել յագահութեան սակի՝ ամենեցուն ատելի լինիւր. բայց ոչ ոք կարէր զդէմ ունել նորա, վասն յերկիւղի թագաւորին։ Սակայն սնկաւ ի լեզուս մեծամեծացն և ռամկաց, կողմաց և աշխարհաց, և բամբասիւր միշտ յամենայն ուրեք յայտնի և ի ծածուկ՝ ասելով եթէ զրզրլպաւ է և զօճախս[2] օսմանցւոց կամի սա չիջուցանել, քանզի զորս կամի իշխանութեամբ բարձրացուցանէ, և զոր ոչն կամի՝ զայն արտաքսէ, արտասահման առնելով զնա ի տանց և ի լնակութեանց, և զայլ ոմանս որք ոչ հնազանդին սմա՝ զնոսա տայ սպանանել։ Որ և զիմրահօր[3] թագաւորին յազգէ Քօփրուլուն[4], չարախօսելով թագաւորին՝ ետ խեղդամահ առնել զնա։ Եւ զկնի մեռանելոյ Հիւսէյին փաշային (որ զիսաղութիւն արար ընդ Քրիստոնեայսն, որ ևս վասն խեղդելոյ զիմրահօրն զայն՝ յոյժ խոցեալ ի սիրտ և անկեալ ի հոգս՝ ցաւագար եղեալ մեռաւ), ետ բերել ի Բաբելոնէ զՑալտապան[5] Մուսթաֆա փաշայն, եւ առեալ զբազում կաշառս ի նմանէ եւ արար զնա վէզիր. որ և արար զվէզիրութիւնն իբրեւ ամիսս երիս։ Եւ որպէս ի վերոյ ասացաք՝ եթէ զամենայն իշխանութիւնս ըստ կամայ իւրոյ վարէր և կամ վարել տայր, նոյնպէս եւ վէզիրաց զոր ինչ հրամայէր սա՝ զայն անյապաղ կատարէին. եւ եթէ գործ ինչ իշխանութեամբ՝ վէզիրն ըստ իւրում հրամանացն առնէր՝ եւ յորժամ լսէր մուֆթին՝ զայն հրամանաւն իւրով յետս նահանջէր։ Վասն որոյ տաղտկացեալ նոյն Ցալտապան վէզիրն կամէր զի սպանեսցէ զմուֆթին։ Իսկ նա իրազգայ եղեալ խորհրդոյ վէզիրին չարախօսեաց զնա վաղվաղակի առ թագաւորն եւ ետ սպանանել զնա։ Եւ իբս այս յայտնի հրապարակաւ հռչակեցաւ առ մեծամեծս եւ առ ռամիկն, վասն այսորիկ առաւել եւս տրտունջ կալան զնմանէ, եւ միշտ քրդմնջիւն էր ի բերանս այլազգեաց եթէ անմեղ ետ սպանանել զՑալտապան փաշայն, և հանապազ խղճալով զազգս իւրեանց աւաղէին եւ ասէին. «Ղըզըլպաշն այս կամի զհաւատս եւ զկրօնս մեր փոխել եւ ինքն թագաւորել». զայս միշտ յամենայն ուրեք ասէին եւ լսէին ընդ յիւրեարս. եւ արամեալ ոխային եւ խորհէին, եւ իբրեւ զյղիս երկնէին զցաւս՝ սպասելով ժամու եւ ժամանակի, մինչեւ եհաս թուականն փրկչին մերոյ հազարերորդի, եօթնհարիւրերորդի եւ երրորդի եւ մերս Հայոց ՌՃԾԲ (1152) եւ Տաճկաց սէնէն ՌՃԺԵ (1115) յուլիս ամսոյ վեց, զկնի տօնի Պայծառակերպութեան Տեառն մերոյ յերրորդումն աւուր՝ օր երեքշաբթի մինչդեռ ի խաղաղութեան կային ազգն այլազգեաց՝ ի նոյնում օրն յանկարծակի յարեան ծառայք թագաւորին որք կոչին ճեպեճիք[1], արք երիսուն կամ քառասուն՝ ժողովեալ միաբանեցան եւ ելին յԱք մեչեանն կոչեցեալ տեղի՝ աղաղակելով զուլֆֆէ[2] խընդրէին։ Եւ յայսմ ամրոխմանէ երկուցեալ քաղաքացւոցն զշուկայս եւ զխանութս իւրեանց կիսախուփս արարին եւ կիսոցն փակեցին իսկ. եւ Սկիպանպաշին[3] որ Հաշիմ օղլի կոչիւր՝ փութացեալ եւ ետ բանալ զկրպակն եւ զշուկայն. քանզի յառաջ քան զայս աւուրքս ինչ, մինչ ճէպէճիքն գնային ի պատերազմ առ Վիրս նաւով՝ յայնմ աւուր յամրոխս արարին ասելով «Ո՛չ գնամք ի պատերազմ մինչեւ ո՛չ առցուք զուլֆֆէյսն մեր. եւ յայնմ ամրոխմանէ խանութք փակեցան եւ հասեալ նոյն Հաշիմ օղլուն զխանութսն ետ բանալ եւ ճէպէճոցն ետ զուլֆ-

[1] Միլֆ, անձնական ստացուածք, մալիքեանէ, պետական կալուածոց պայմանաւոր ստացումք առանձնակի կողմանէ. չիֆթլիկ, ագարակ։

[2] Օճաղ, կրակարան, ծխան. տոհմ, գերդաստան։

[3] Իմրահոր, էմիրի ախոր, ախոռապետ։

[4] Քէօփրիլիներու ցեղը յոյժ նշանաւոր է. օսմանեան տէրութեան ուսած է հռչակաւոր սադրազամներ, ինչպէս Մեհմետ փաշա, Ֆազըլ Ահմետ փաշա, Մուսթաֆա փաշա և Ապդուլլահ փաշա։

[5] Տե՛ս Արձ. Գ. տարի, թիւ 113, էջ 699, ի ծանօթութեան։

[1] Ճէպէճի՝ զրահաւոր։

[2] Իւլիւֆէ՝ ռոճիկ, թոշակ զօրացս։

[3] Սէկպան՝ շնական, եէնիչէրի զօրաց դասակ։

ֆէյս նոցա, եւ ելից զնոսա ի նաւս եւ առաքեաց ի վերայ Վրաց ի պատերազմ, եւ յայնժամ զնոյն կամեցաւ առնել, բայց սոքա դարձեալ ի միւսում օրն յաւելան ի նոյն տեղին եւ միաբանեալ ի նոյն գոյժ եւ զաղաղակ բարձեալ թէ «զուլէֆէ խնդրեմք»։ Եւ կրկին ի նոյն օրն խանութպանքն փակեցին զխանութս իւրեանց եւ սէկպան պաշին հասեալ ի շուկայն հրամայեաց քանալ զՊեգեսքենս զխանութն եւ ճեպեաց յԱթ Մէյտան առ ժողովն ճէպէճոց հանդերձ զօրօք իւրովք եւ ասէր քաղցրութեամբ եւ հանդարտութեամբ թէ «Ընդէ՞ր յայսմ վայրի ժողովեալ էք»։ եւ նոքա զաղաղակ բարձեալ վասն ուլէֆէի, եւ նա յանձն էառ թէ ի վաղիւն զուլէֆէյս ձեր ես ինքնին տացից, եւ դուք այժմուս ցրուեալ գնասջիք ի տեղիս ձեր, եւ դարձեալ ի նոցանէ գնաց առ Ալտուլլահ փաշայն որ թոռն էր Քէօփրուլուն, այլ եւ փեսայ Ֆէյզուլլահ մուֆթուն եւ էր զայմախամ Իստամպօլու, եւ էառ զհրամանն ի նմանէ զի ի վաղուեան օրն կոտորեսցէ զճէպէճին։ եւ ծանուցեալ զայս ճէպէճոյն զօրայ առաւել եւս կուտեցան եւ ընդ ինքեանս առեալ զսօֆթայս հանդերձ դրօշօքն նոցա, եւ եկեալ ժողովեցան ի հինգշաբաթի առաւօտուն ի նոյն Աթ Մէյտանն, եւ ամբոխ մեծ արարին եւ սկսան աղաղակել եւ բարձրացուցանել զձայնս իւրեանց փոխելով այսօր զբանս իւրեանց՝ գոչելով ասէին թէ «զթագաւորն եւ զմայրն, զմուֆթին եւ զվէզիրն խնդրեմք, եւ ոչ կամիմք զնոսա այսուհետեւ»։ եւ այնքան սաստիկ գոչելով աղաղակէին «Ալլահ, Ալլահ», մինչ զի զձայնս իւրեանց ի յօդս սփռէին առ հասարակ քաղաքաւս, այլ եւ ձայն աղաղակին տարածիւր ընդ յերեսս ծովուն, քանզի բարձր է Աթ Մէյտան անուն այն։

(Շարունակելի)

ԵՍԹԵՐ(*)

(Շար.)

Դ. ԱՐԱՐ Թ. ԱՍՏԱՐԵԱՆ

Մնացածը ամբողջ կ'երգուի

Էլիզ, երգչախումբը

Երգչախումբը

Երանի՜, կ'ըսեն, այն ծաղկեալ ազգին,
Որուն վրայ կը վեղուն այս բարիքներ։
Ա՛լ երանի անմեղ ազգին,
Որ երկնից Աստուծոյն վերան իր յոյսն է դրեր։

Օրիորդ մը, միանակ

Իր սիրն անուշին յաղուրդ տալու համար
Մարդն անդգամ ճիգ կը թափէ վայրապար,
Կը գտնէ միշտ դառնութիւն
Հաճոյից մէջն անգամ։

Ուրիշ մը, միանակ

Ամբարշտին երջանկութիւնն է միշտ յուզեալ
Կը յածի նշաւակ յողդողդութեան իր անձին։

(*) Տես թիւ 430, էջ 42

Երջանկութիւնը վնասուեցաք
Լոկ խաղալ և անմեղ կեանքի մէջ։

Նոյնը, ուրիշի մը հետ

Խաղաղութիւն,
Լուսաղբիւր յաւերժական.
Ո՛վ միշտ նոր գեղեցկութիւն.
Երանի՜ քեզ սիրահար սրտերուն
Խաղաղութիւն,
Լուսաղբիւր յաւերժական
Երանի՜ միշտ ըղձեզ վայելողին։

Սրգչախումբը

Խաղաղութիւն,
Լուսաղբիւր յաւերժական,
Ով միշտ նոր գեղեցկութիւն,
Խաղաղութիւն,
Երանի՜ միշտ ըղձեզ վայելողին։

Նոյնը, վիճակ

Խաղաղութիւն չըկայ չարին, զո՛ւր կ'ուզէ զայն։
Հանգիստն իր սրտին մէջ բընաւին տեղ չի գտներ.
Սուրը դրսէն, խիղճը ներսէն
Զինքն ամէն ժամանակ կը տանջեն։

Ուրիշ մը

Փառքը չարին յակոն քիթիկ կը չիջանի.
Կը լափէ զինքը միշտ տասպանն արհաւրոտ
Ո՛չ, այսպէս չէ, այն որ երկիւղ ունի քեզմէ,
Վերածնի պիտի, Տէ՛ր, արշալոյսէն ա՛լ պայծառ։

Սրգչախումբը

Խաղաղութիւն,
Երանի՜ միշտ ըղձեզ վայելողին։

Էլիզ, առանց երգելու

Մօտակայ սենեկին մէջ, քոյրեր տգմուկ կը լսեմ.
Կը կանչեն ըզմեզ, երթա՛նք ընկերանա՛նք Դշխոյին։

ՎԵՐՋ Բ. ԱՐԱՐՈՒԱԾԻ

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԻ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՎՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ" ԳՐՔԷՆ

Գիրք Ա.—Գլ. ԺԸ. — Ս. Հայոց օրինակներուն վրայ։

(Շար.)

Բարի՛. ո՛րչափ մեծ եղաւ ամէն կրօնաւորներու հանգիստը՝ իրենց սուրբ կարգին հաստատութեան սկիզբը։

Ո՛հ, ո՛րչափ ջերմեռանդութիւն աղօթից, ո՛րչափ մրցում առաքինութեան, ո՛րչափ մեծ բարեկարգութիւն կը տիրէր, առաջնորդին կանոնին ծակ. ո՛րչափ յարգանք ու հնազանդութիւն ծաղկեցաւ ամէնուն մէջ։

Մինչեւ հիմա մնացած հետքերը կը վկայեն թէ յիրաւի անոնք սուրբ եւ կատարեալ մարդեր եղան, որ այնչափ խաչաբար գիւնուորելով զաշխարհն առաքուր կոխեցին։

Իսկ հիմայ մեծ կը հատարուի եթէ մէկը կանոնագանց չըլլայ, եթէ մէկը՝ ընդգրկած վիճակը հարերուբեամբ կարող ըլլայ տանիլ։

Ս. ՖՐԱՆՉԻՍԿՈՍ ՔՍԱՒԻԵՐԵԱՆ

Ս. Ֆրանչիսկոս յետոյ անցաւ Փէյրոյի ծովափը որ Գոմորինէն մինչեւ Մանար կղզին կը տարածուի։ Այս երկրին բնակիչները, որ Փարավա (Հինդոս) կը կոչուին, մկրտուած էին. բայց վրանին քրիստոնէի կնիքն ուրիշ բան չէր մնացեր։ Անոնց սրտիցուց քրիստոնէական վարդապետութեան նախնական տարրերը, անոնցմէ բիւրաւորներ խոստովանցուց, քառասուն հազարի չափ մկրտեց, հարիւրաւորներ բժշկեց. թէ՛ անոնց վրայ խաչակնքելով թէ՛ անոնց մօտ գրկելով նորակնունք փոքրիկ տղաներ, որոնք իր վարդապետները, խաչելութիւնը, կամ նշխարատուփը հեթանոսներին կը տանէին, հիւանդներուն հմբուրել կու տային և անոնց վրայ Հայր մեր մը կամ Հաւատամք մը կ'ըսէին։ Ապա ամէն աւանդներու մէջ ի պատիւ Ճշմարիտ Աստուծոյ եկեղեցի շինել տուաւ, Փակոս կոչուած գաղջելի մեհեանները ուր սուտ աստուածները կը պաշտուէին։ Վերջապէս իսպառ ջնջեց հեթանոսութիւնը, և այլեւ տուաւ այն բոլոր կուռքերը, որոնց այնչափ երկար ժամանակ հրապարակական պաշտամունք տարուած էր։ Իր սքանչելի վարքը և իր հրաշքները շատ նպաստեցին այս գործերուն։ Որովհետեւ իր կերակուրը տեղւոյն ամենէն աղքատներուն կերակուրն էր, բրինձ և ջուր. օրը երեք ժամ միայն կը քնանար, անկողինը՝ մերկ գետինն էր, և բնակարանը՝ ձկնորսի մը հիւղը։ Իր սրբացման գաստին մէջ կը յիշուի թէ, այս միջոցին, Աստուած. իր միջնորդութեամբը, չորս մեռելի կենդանութիւն պարգեւեց։

Յաջորդ տարին, դէպի Կօա ուղեւորութիւն մը բրաւ, հոն, երիտասարդ Հնդիկներուն համար վանք մը հաստատելու. ապա Փէյրոյի դարձաւ և մխիթարեց իր սիրելի Փարավաները, որ իրենց թշնամի Պատաժներէն կողոպտուած և հալածուած էին. յետոյ գնաց Թռավանգոռ ուր իր քարոզներուն անդիմադրելի զօրութեամբը մեծ բարիքներ բրաւ։ Տեղւոյն թագաւորն իսկ այնքան յուզուեցաւ որ Սուրբին հրաման տուաւ որպէսզի իր բոլոր երկրին մէջ քարոզէ. և հաւանեցաւ որ իր բոլոր հպատակները Սուրբին ձեռքով քրիստոնեայ ըլլան և մկրտուին։ Այս տեղ ան՝ լեզուախօսութեան պարգեւը ընդունեցաւ, առանց թարգմանի կատարելապէս խօսիլ կարենալու համար. փախստական բրաւ նոր քրիստոնեաներուն վրայ յարձակող բարբարոսներուն բանակը, խաչ ի ձեռին՝ անոնց ընելով. Կ'արգիլեմ ձեզի, յանուն կենդանի Աստուծոյ, առաջ երթալ, եւ կը հրամայեմ, իր կողմէ, որ ետ դառնաք։ Աստուածային Բարութեան մանաւոր պաշտպանութեամբը ազատեցաւ Բրահմաններուն լարած սրգայթներէն և արձակած հարուածներէն. մկրտեց մէկ ամսուան մէջ 10,000 հեթանոս, քառասունը հինգ եկեղեցի շինեց և վերջապէս բազմաթիւ մեռելներու յարութիւն տալով հաստատեց Կաթոդիկէ Ճշմարտութիւնները և ամենահար բրաւ անհաւատներուն յամառութիւնը։ Այս հրաշքներով այնպիսի բարձր համբաւ մը շահեցաւ Հնդկաց մէջ, որ ամէն գաւառ, ամէն քաղաք, ամէն աւան հանդագին կը փափաքէին անոր ներկայութիւնը վայելել։

Մխիթարութեամբ լեց ոչ միայն դարձը Մանար կղզւոյն բնակիչներուն, որոնց քարոզած էր Փէյրոյի թողած քահանաներէն մէկը, այլև մարարութիւնը վեց, եօթը հարիւր նորադարձ բրիստոնեաներու, որոնք նահատակուեցան փոխափոխեամ թագաւորին հրամանով։ Սատանաներուն, անհաւատներուն և դիւերուն վրայ այսչափ յաղթանակներ կանգնելէ յետոյ, Սուրբ Ֆրանչիսկոս ուղեւորութիւն մը բրաւ Մէլիափուռ, գոր Փարթուկայցիք Սուրբ Թովմասի քաղաք կ'անուանեն՝ նոյն Սուրբ առաքեալին այն աեղ նահատակուած և թաղուած բլլալուն համար։ Հոն գտաւ անոր անուան նուիրուած մատուռ մը, ուր երկնային անհուն մխիթարութիւններ ունեցաւ։ Անկէ գնաց Մալագա, Ամպուան, շրջակայ փոքր կղզիները, Մորուքեանները, որոնց ոստանն է Թէռնադ, և Մոր մեծ կղզին ուր է Մանոյա քաղաքը։ Այն տեղերը շատ դարձեր բրաւ մեծամեծ հրաշքներ գործեց։ Ան ատեն ձեռք գարկաւ աւետարանը բարոզելու Ճարոնի մէջ, որուն Աւանբեայր եղաւ։ Բայց հոն չդացած իր առաջնորդն քարոզած տեղերը պարարեցաւ, Յիսուսի Քրիստոսի թագաւորութիւնը հաստատելու համար, խաչեր կանգնելով, քարքերը վերանորոգելով և հոգիներն ու մարմինները բժշկելով։

(Շարունակելի)

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՍԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (*)

Ե.

(Շար.)

«Բարեկիրթ եւ քարեմոյն ըլլաս,
«եւ պիտի ըլլաս սիրելի»:

Ն.

«Բարեկիրթ ըլլաս»

Ուրիշներուն բարիք ընելու յօժարակամութիւնն և պարկեշտ հաճոյակատարութիւնն բարեկրթութեան գլխաւոր մասերն են. բայց միայն այս չէ որ բարեկրթութիւնը կը լրացնէ. դեռ ուրիշ բան մ'ալ կայ, զոր ոմանք կերպերու շնորհք կը կոչեն։ Ըստ այսմ, բարեկրթութիւնն ոչ միայն հաճոյական չեղող բան մը չընելու և չըսելու մէջ կը կայանայ, այլեւ հաճոյական եղողը ընելու և ըսելու մէջ այնպիսի եղանակաւ յայտարարութեան, կերպերու, որոնք իրենց վրայ տեսակ մը ազատութիւն և բնականութիւն կրեն, և երբեմն նաեւ ճարտարութիւն և փափկութիւն։ Հնար է բարեկրթութիւնը՝ համեմեալ բարութիւն մը կոչել. բարի սրտի մը վրայ աւելցուած՝ շնորհալի ձեւն է։ Բարեկիրթ մարդն կ'աշխատի ուրիշները իրմէն և նոյն իսկ իրենցմէ գոհ թողուլ. վասն զի մարդիկներուն ամենէն զօրաւոր կիրքն ուրիշներէն յարգանք և համարում գտնելն ըլլալով, ճշմարիտ բարեկրթութիւնն կը կայանայ մանաւանդ անոնց համարումն և յարգանք ընծայելու, անոնց անձնուիրութիւնը խնամելու, և նոյն իսկ ճարտարութեամբ շոկելու մէջ։ Այս ըսել չէ թէ, հարկ ըլլայ երբեք փաղաքշանք և շողոքորթութիւն գործածել։ Շողոքորթութիւնն միշտ մոլութիւն մի է, եւ ճշմարիտ բարեկրթութիւնն, ինչպէս կատարեալ արդարութիւնն, պիտի ամենայն ատիկա գործածելու։ Ատիկա իսկապէս կեղծ գովեստ մի է, մինչդեռ հնար է ճշմարիտ գովեստներով փաղաքշել եւ երբեմն պատեհ է նաեւ զայն ընել, լաւ եւս մէկու մը սիրտը շահելու, եւ լաւ եւս ինչ ինչ բարի խրատներ ընդունելի ընծայելու, կամ օգտակար յանդիմանութիւն մը արդիւնաւոր ընելու համար։ Բայց եթէ հնար չըլլար այլազգ հաճելի ըլլալ, եթէ ոչ կեղծաւորութիւն եւ սուտը գործածելով, հարկ է այն ատեն բարեկրթութիւնը զոհել ճշմարտութեան։ Զգործածես երբեք այն առերեսս բարեկրթութիւնը, որ գրեթէ միշտ արտաքին սովորական մեծարանաց եւ ծամածռութիւններուն վրայ կը կայանայ, եւ անոնցմով կը վերջանայ։ Նոյնպէս նաեւ ի նկատի չունենաս այն աշխարհիկ բարեկրթութիւնը, որ ուրիշ նպատակ չունի, եւ այդ միջոցներն ուրիշ վախճանի համար չի գործածեր, եթէ ոչ իր եւ նաեւ ուրիշներուն ունայնութիւնը փաղաքշելու, բարեկիրթ մարդու համբաւ ստանալու, եւ այսպէս ամբոխէն եւ ռամիկ ժողովրդէն զանազանուելու համար։ Ամենեւին այդպիսի վախ մը չկայ բարեկրթութենէն, որ քրիստոնէական զգացումներէ ներշնչեալ եւ օժանդակեալ է։ Եւ որովհետեւ ատիկա միշտ բարերար սրտէ մը կը բղխի, որ մարդկանց բարեկամ, եւ անոնց հաճոյք պատճառելու միտեալ է, ատիկա, կ'ըսեմ, ապահով եւ հաստատուն հիմ մի է, անկեղծ, փութկոտ, մեծահոգի, հաստատուն բարեկրթութիւն մի է, և այսպէս ըսելու համար, այնպէս ճշմարիտ, այնպէս անայլայլ, ինչպէս որ է Աստուած, որուն, բարեկիրթ քրիստոնեայն, մարդկանց բարիք ընելով, կը ջանայ գլխաւորաբար հաճելի ըլլալ։

(Շարունակելի)

(*) Տես Արձ. Գ. Տարի թիւ 123, էջ 757։

ՊԻՐ ՎԱՇԻՆԻՆ „ԴԱՐՁԸ"

Բրօքասիօն ֆր լա ֆռաս մէվզուբէսինին 1914 Յունվար քարիխլի նիւմորէսնեա Հոգին Ուրբ քարիգաթրնին Հ. Բէմոն Վարդապետին իմզասրյլա եազրմիս օլան մէգմլէնին թէրճէմէսի տիր։

Բամբն նէսլինի թէրզիլ իյլէյէն մէրտիւմխարլըղըն (մարդակերութիւն) հիւքիւմ ֆէրմա օլտուղը եէր եալնըզ Աֆրիգանին մէրքէզի տէյիլ տիր։ Սիէրա-Լիոնէաէ, Շէրպրոթէսմիյէ օլունան բէք գատիմվէ գատիմ օլտուղը գատար սա վահշի օլան պիր գապիլէ

վար սրբ քի պունլար ինտինտէ, ինսան եէմէք, բէտէրտէն էվլատա մէվրուս պիր ատէթ հիւքմիւնէ կէչմիշ տիր։ Պու կիւնէ գատար պու պարպար գալմը մէրտիւմիարլրգ ատէթի մէնֆուրէսինտէն հիչ պիր չէյ կէրի սուրտուրամամըշ տրբ։

*
* *

Պիր նէվ ֆրան-մասոն ուսուլիյլէ վէ չէյթանի պիր ինթիզամ իլէ թէրթիպ իտիլմիշ օլան պու ինսան գուրպան իթմէք ատէթի, պիր այնի բուհանի մագամընտա իճրա օլընմագտա տրբ։ Շէրպրո, հէմճինսինի գուրպան իթմէքլէ, ինսան էթի եէմէքտէն զիյատէ քէնտի իթիգատը բուհանիսինէ իթթիպա մէրամընը թէրվիճ իթմէք իսթէր։

Պիր Շէրպրո գապահաթը վէ եա թէվպէքէար օլտուղը վագրթ ֆիքրինէ գոր քի պիր սուչսուզըն գանընա իլհագ օլաճագ օլուրսա, էսկի բազլըղընը պուլապիլէճէք տիր։ «Պիր չօճուգ էօլտիւրիւպ գանընը իչէլիմ, իչթէ օ զէման ֆօնի-կոլեպլա (գարնը պէյազ օլուրըզ» տէր։

Եա գորգու վէ եա տիկէր պիր սէպէպ սայիգասըյլա Շէրպրո ֆիքրինէ գոմուշ տրբ քի ինսան վիճիտինին պազը ազասը քէնտի էվ իլաճլարընա գարըշտրրլտրգտա վէ եախսա քիւչիւք բութլարա սիւրիւլտիւգտէ, ֆէվգ էլատէ պիր գուվվէթ իքթիսապ իտէրլէր։ Իչթէ պու միւրէքքէպաթա Ֆօֆիմօ նամը վէրիրլէր։ Ֆօֆիմօյա մալիք օլան Շէրպրո կիւյա սահիպի սէրվէթ օլուբ վէ զէվգ ու սէֆա իլէ եաշարմըշ, զուլմտան գուրթուլըր վէ պէյազըն զատրընտան մասուն գալըրմըշ։

Միսիօնէրլիք հայաթըմըն թարիխինտէ, պունլարա տայիր բէք չօգ հիքայէլէր վարատա, պունլարտան պիրինի պուրատա նագլ իթմէք իսթէրիմ քի պու զավալլրլարըն «դարձա» կէլմէլէրի խուսուսընտա Ալլահըն պիզէ օլան մէրհամէթինէ վէ Ս. Աստուածածինին տէ եարարմընա տէլալէթ իտէր։

*
* *

Օ կիւն հապսխանէ կարտինը, պիլմէզսին պաչը աղրըտրղընտան մը եա սոլ այաղը իսթիւնէ գալգմըշ օլտուղընտան մը, բէք թիթիզ վէ աքսի իտի։

— Էֆէնտի, պուրատա հարաճագ պիր իշինիզ եօգ տրբ, չիւնքի մահպուսլար արասընտա բոմալը տէնիլէնլէրտէն հիչ քիմսէ եօգ տրբ, տէտի պանա։

— Աֆվ իտէրսինիզ, պէն բոմալը տրամայորըմ, պէն գըսաճա դաթօլիք վէ ֆրանսըզըմ, պաչգա թապիրէ լիւզիւմ կէօրմէյորըմ։ Զահմէթ օլմագտա չու իտամա մահքիւմ իտիլէն ատամը կէօսթէրէպիլիրմիսինիզ։

— Օ գաթօլիք տէյիլ տիր։

— Պէն սիզէ ծնրն նէ՝ օլտուղընը սոռմայորըմ, ծնու կէօրմէք իսթէյորըմ, իչթէ բասաբորթըմ։

Կարտինան բէրտէյի էնտիրտի վէ օ գօճաման գաբուլը աչարագ քէնտիսի կէրի չէքիլտի վէ պէնի իչէրի կիրտիրտի։

*
* *

Իչէրի կիրէր կիրմէզ տօղրու, զավալլը մահքիւմընն իճրայը հիւքմիւ իտամա պէքլէտիյի հիւճրէյէ կիթտիմ, օրատա ծնը էսկի պիր հասբը իւզէրինէ օթուրմուշ կէօրտիւմ։ Սիյահ, չիշման, իսթիյարլըգտան վէ պիւյիւճիւլիւքտէն աշընմըշ, էլլէրի գուրումըշ, չէհրէսի չէքիլմիշ, պէնգի սօլմըշ։ Շաշգընը պագըշլը, կէօզլէրինին աթէշի սէօնմիւշ, եորկուն վիւճուտլը։ Նիհայէթ, ճէհալէթի ու գապահաթընն ինթահ իտէպիլտիյի պիլճիւմէ սէֆալէթինն պարը կիրանը ալթընտա էգիլմիշ պիր հայտուտ սուրաթընը կկյինմիշ պիր ինսան կէօլկէսի կիպի կէօրիւնտիւ պանա։ Զահիրէն պու գատար մուճիպի նէֆրէթ կէորիւնէն պու ատամընն եանընա օթուրտրզըմտա քէնտի քէնտիմէ «Եա՝ Բապպի, պէնի քիմէ եօլլատըն։ պու էթի եըզընընտան հիչ պիր չիւլէյի հայաթ չըգմասընընն գապիլի վարմը» տէյորտրմ։ Ճէնապը Հագգընն մէրհամէթինին գալպիմտէ ապս իտէն սէտասը պէնիմ զօրգու վէ թէլաշլարրմը սուստուրտը վէ միւթէրէտտիտանէ պիր իքի չիֆթ սէօզ սէօյլէմէյէ ճէսարէթ իթտիմ։

— Ազիզիմ, թապիի տիր քի պիր պէյազըն սանա զիյարէթէ կէլմէսինէ թէաճճիւպ իտիյորսըն։

Իլք ճէվապը, պիր տէրին սուսլուգ վէ

թէրս պիր պագրչան պաշդա պիր չէյ օլ-մասը։

— Ազիզիմ, պէն անի ճիտէն սէվիյօր օլտուղում հալտէ, սէն նիչլո՞ն պէնտէն չէքի-նիյօրսուն։

Ելինէ սիւքութ տէվամ իտիյորը, վէ իշթէ պէնիմ իւչիւնճիւ պիր քէրրէ տահա սէօյլէյէճէյիմ անտէ,

— Խայրը, սիզ պէյազլար՝ սիյահլարը սէվմէզսինիզ, տէտի։

— Նէ՞ տէմէք իսթէյօրսուն, տօսթում։

— Պէնի սէվմիշ օլսա իսին, պէնի էօլ-տիւրթտիւրմէզ իսին։

— Սէնին էօլիւմիւնէ սէպէպ պէն օլտու-ղունա էյիճէ էմի՞ն մի սին։

Թէքրար պիր սիւքութտան սօնրա, եիւ-զիւմէ պագմաղա պաշլասըղընտա,

— Եօ՛գ, իսթիյար պապաճըղըմ, պէն գաթիէն սէնին էօլիւմիւնիւ իսթէմէմ։ Պէն Ալլահըն ատամըյըմ, պուրայա կէլմէքլիյիմ-տէն մագսատ, էպէտի հայաթա մալիք օլ-մանըն չարէլէրինի սանա էօյրէթմէք պիր, տէտիմ։

Պիչարէ իսթիյար ալտանմըշ պիր քիմսէ թավրընը ալարագ պաշլատը պաշընը սալա-մայա։

— Սէնին, պէնի էօլիւմտէն գուրթարմագ իսթէմէտիյին, պէնի սէվմէտիյինին նէթիճէ-սի տիր։

Պունըն իւզէրինէ պէն միւթէրէտտիտ նէ տէյէճէյիմի տիւշիւնմէքտէ իքէն, Ալլահ ֆիքրիմի թէնվիր էյլէտի վէ օնա,

—Սէնին պու գատար տէհշէթինի մու-ճիպ օլան պու էօլիւմտէն սէնի եալընըզ Ալ-լահ գուրթարապիլիր, տէտիմ։

Վահշի սիւքութընտա տէվամ իտիյոր վէ չաշգըն չաշգըն պանա պակրյօրաը - չիւնքի պէնիմ պու թապիրլէրիմտէն հիչ պիր չէյ ան-լամայօրսը։

— Ալլա՛հ մը, տէտի։

— Էվվէթ, օնը թանը՞ըմըսըն։

— Խայրը։

— Իսթէրսէն սանա օնը թանըթարրայըմ։

— Խայրը։

— Հիչ տէյիլսէ տուա էթմիրմէյի սանա էօյրէթմէքլիյիմէ բազի օլո՞ւրմըսըն։

— Հիչ պիր չէյէ բազի օլմամ։ Մասամ քի պէն «գարնը պէյազ» տէյիլ իմ, ֆիւթուր-ուզ սուրէթտէ էօլիւմիւ գապուլ էտէմէմ։

— Ազիզիմ, ա՛լ չու միտալը։

(Մապատի վար)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Յունուար 25ին, Պիոս ժ. Սրբազան Ռահմանայապետը մասնաւոր ունկնդրութեան ընդունեցաւ Նըվէրի Եպիսկոպոս Շա-թըլիւ Դերպայծաւը։ Ս. Ռահմանայապետին առող-ջութիւնը շատ լաւ է։ Նոյն օրը առաւօտուն, ըստ սովորութեան, ուրիշ շատ մասնաւոր ունկնդրութիւն-ներ ալ շնորհեց։

*** Վսեմաշուք Ֆերրաթա Կարդինալը՝ Ամբրիկէի առաքեալներուն պաշտպան անուանուեր է։

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ —Փետրուա-րի առաջին և երկրորդ օրերը շքեղ հանդէսներ տեղի ունեցան Անարատ Յղութեան Կարգին Մայր-վանա-տան մէջ, առթիւ ուխտագրութեան ոսկեդէն յոբել-եանին ընդհանուր Մեծաւորուհի Քոյր Պրիճիտա Եաղլըքճեանի, Որբանոցի Մեծաւորուհի Քոյր Աղաս-նի Ասկէրեանի և Ա. Ա. Քերց Մանէ Գազազեանի, Բեփրանէ Մխիթարեանի, Վերոնիքա Քէօսէեանի, և Պիսախ Խաճիճեանի, որոնք Մայր-վանատան կամ Ա-ռաքելութեանց մէջ, ամբողջ կէս դար, իրենց բոլոր ուժերը նուիրած են իրենց անձին սրբութեան և օ-րիորդաց դաստիարակութեան փափուկ և ամենակա-րեւոր գործին, և հիանալի փոյթեռանդութեամբ և յաջողութեամբ կատարած են և կը կատարեն այլ եւ այլ ծանրակշիռ պաշտօններ։ — Փետրուար 4ին, Մայր-վանատան սրահին մէջ Որբանոցի և Արուեստա-նոցի օրիորդաց կողմէն ի պատիւ Ա. Ա. Յարգելեարնե-րուն, ընտանեկան գեղեցիկ հանդէս մը տեղի ունե-ցաւ։ Սրահը լի էր հրաւիրեալներու ընտիր բազմու-թեամբ։ Հայերէն և Ֆրանսերէն լեզուով գեղեցիկ ուղերձներ արտասանուեցան, ներկայացումներ տրուե-ցան և երգեր երգուեցան դաշնակի ընկերակցութեամբ։ Ուշադրութեան արժանի էր աշակերտուհեաց թէ՛ Հայերէն և թէ Ֆրանսերէն արտասանութեանց մաք-րութիւնը, որ յիրաւի պատիւ կը բերէ գիրենք կըր-թողներուն։ Հանդէսը փակեց Կարգին գործակատար Դերյ. Յ.Վ. Ծ. Վ. Թումայեան, մի քանի պարա-գային յարմար խօսքերով։

Փետր. 2ին, Տեառնընդառաջին, որուն հանդիսին համար սահմանուած օրը, Մայր-վանատան մատրան

մէջ պատարագեց Աժեն. Գերերջանիկ Հոգեւոր Տէրը Հաւատամքէն առաջ յուզեալ շեշտերով խօսեցաւ օրուան խորհուրդին և մթնդամայն կրօնաւորական կեանքին գերազանցութեան վրայ։ Պատարագէն անմիջապէս վերջը հաղորդեց ամէնուն Ս Քահանայապետին, այս յոբելեանին առթիւ, շնորհած լիակատար ներողութիւնը։ Ապա յոբելեար Բոյրերը ըրին իրենց մշանջենաւոր ուխտը, և ընդունեցան Ն. Գերերջանկութեան ձեռքէն մէյ մէկ ոսկեգոյն ծաղկեպսակ, զոր կրեցին նոյն օրը ամբողջ։ Ժամը ինն ու կէսին, մատրան մէջ, ձայնաւոր պատարագ մատոյց Արշի. Յովսէփ Արքեպ. Ռոքոսեան, Կ. Պարիսեանական Փոխանորդ Գերապայծառը։ Ընթերակայութիւն և սարկաւագութիւն կ'ընէին Գեր. Գեր. Թումայեան, Հատիկեան, Սարուխանեան և Աթանասեան վարդապետները։ Իպարց դասը ներդաշնակօրէն կ'երգէր։ Աբարողութենց վեհութիւնը՝ օրուան ոգին և յոբելեանին ղրկած խորհուրդներուն հետ խառնուած, կ'ոգեւորէր, կը յուզէր մասնաւորը խնուած հոգ բազմութիւնը, և արցունք կը քամէր շատերուն աչքերէն։ — Կէսօրէն յետոյ Մայր-վանատան աշակերտութեան կողմէ, սրահին մէջ, փառաւոր հանդէս մը կատարուեցաւ, ընտիր ձներ, յուզիչ ներկայացումներ, բազմաձայն երգեր տեղի ունեցան հայերէն և ֆրանսերէն լեզուներով, վայելուչ արտասանութեամբ, գեղեցիկ կարգապահութեամբ։

Այս առթիւ մեր անկեղծ շնորհաւորութիւնները ուղղելով Ա. Ա. Յոբելեար Բոյրերուն կը մաղթենք որ Աստուած պարգեւէ իրենց դեռ երկար և բազմարդիւն տարիներ. որպէսզի արժանի ըլլան նաև տօնելու իրենց ադամանդեայ յոբելեանը և աւելի շքով պճնելու իրենց յաւիտենական փառաց անթառամ պսակը։

*** Փետր. 1ին, Սէնթ-Էսփռի Մայր եկեղեցւոյն մէջ, Ս. Յովհան Ոսկեբերանին տօնին առթիւ, ձայնաւոր պատարագ մատոյց Պոլսոյ Առաքելական Նուիրակ Արշի. Վ. Սառաֆ Գերապայծառը։ Ներկայ գտնուեցաւ այս պատարագին և նոյն օրուան եկեղեցական պաշտամունքին Ն. Գերերջանկութիւնը Աժեն. Պողոս-Պետրոս ԺԳ. Թէրզեան Կ. Պարիսեանական Տանն Կիլիկիոյ, հետն ունենալով Արշի. Արշի. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոքոսեան Կ. Պ. Փոխանորդ և Մատթէոս Եպիսկոպոս Արպեան Գերապայծառները։

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՈՐՍԵՐ.— Կը լսուի թէ բարեկարգմանց ծրագիրը Կայս. վաւերացման պիտի մատուցուի։ Վերջնական որոշումն այն ըլլալ կը թուի որ Վանայ և Բաղէշի վիլայէթներուն մէջ ընդհ. ժողովները կէս առ կէս Իսլամ և Քրիստոնեայ անդամներէ պիտի բաղկանան, Կարնոյ վիլայէթին մէջ հաւասարօրէն տարի մը միայն, մինչեւ որ մարդահամար կատարուի, իսկ Խարբերդի, Տիգրանակերտի և Սեբաստիոյ վիլայէթներուն մէջ Քրիստոնեայ անդամք ամբողջին մէկ երրորդը պիտի կրնան ըլլալ։ Վեց վիլայէթներուն մէջ պաշտօնեայք և ոստիկան—զինուորք կէս առ կէս Իսլամ և Քրիստոնեայ պիտի կրնան ըլլալ, քանի որ ներկային մէջ տեղւոյն վրայ նոյնչափ թիւով Քրիստոնեայ պաշտօնեայ և ոստիկան չեն գտնուիր։ Իսկ վեց վիլայէթներուն վարչական ժողովները (հատրէ մէճլիսի) կէս առ կէս Իսլամ և Քրիստոնեայ անդամէ պիտի կազմուին։ Բ. Դուռն Եւրոպացի քննիչներուն անուանումը Տէրութենց ծանուցած ժամանակ այս բարեկարգական տրամադրութիւններն ալ պիտի զեկուցանէ ծանուցագրով մը, Կայս. Իրատէին Բ. Դրան հաղորդուելէ ետքը։ Վերոյիշեալ տրամադրութիւնք վեց Վիլայէթներուն վերաբերելով, կ'երեւի թէ Տրապիզոնի վիլայէթին համար մասնաւոր կարգադրութիւն մը չէ եղած։

*** Կ'լսուի թէ Իթթիհատը որոշեր է Հայերէն 8 իսկ Յոյներէն 17—19 երեսփոխան ընտրել տալ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	81
Ցիսուս Քրիստոս	84
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Մկրտութիւնը	86
Տեառն Կոմիտասայ Քահանային պատմութիւն Օսմանցւոց.	87
Եսթեր	90
Եօթնեակ Քրիստոնէի	92
Իմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ.	93
Պիր վանճինին «դարձ»ը	67
Տեղեկագրական	79

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձապանգ Շաբաթաթերթի, Բեռա. Պաւրամ փոգոս թիւ 6, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տարեկան՝ 40 դրկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դրկ.։—Արտասահման՝ տար. ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են։

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս։

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրերը։ 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ո և է յօդուած։ 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին։ 4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր։ 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն։ 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին։ 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին ղրկել։

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դրկն.։
Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դրկն.։

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5։ Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար։ Կը տպուին ամեն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրուիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէներ. մահազդներ, եւն. եւն.։ Գիները անմրցելի կերպով աժան են։ Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական ժաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան։

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE: I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapeste, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemysl, Salsburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

SUCCURSALES EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.
Avances sur Marchandises.
Achat et vente de change sur l'Etranger.
Escompte d'effets de commerce.
Emission de chèques, et de lettres de crédit.
Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.
Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.
Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.
Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accreditifs simples et documentaires.
Exécution d'ordres de Bourse.
Garde de valeurs publiques etc. etc.
Caisse d'Epargne.
Locations de coffre-fort.